# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 77-Լ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՁԵՎԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ոստիկանության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 270-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գործունեության կազմակերպման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության փաստաթղթերի ձևերը և դրանց վարման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Վ. ՂԱԶԱՐՅԱՆ

«01» 11 2024թ.

ք. Երևան

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2024 թվականի
նոյեմբերի 01-ի N 77-L հրամանի

# ԿԱՐԳ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են «Ոստիկանության մասին» օրենքով նախատեսված Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության (այսուհետ՝ ոստիկանություն) խնդիրների իրականացման ընթացքում ոստիկանության համայնքային ոստիկանության (այսուհետ՝ համայնքային ոստիկանություն) գործունեության նպատակները, կազմակերպչական հիմունքները, համայնքային ոստիկանության գործառույթները հանցագործությունների և վարչական իրավախախտումների պրոֆիլակտիկա իրականացնելիս, համայնքային ոստիկանության ծառայողի, համայնքային ոստիկանության բաժնի պետի և նրա տեղակալների գործառույթները, համայնքային ոստիկանության համագործակցությունը հասարակության, պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ, համայնքային ոստիկանության գործունեության հրապարակայնության և համայնքային ոստիկանության ծառայողների գործունեության գնահատման հետ կապված հարաբերությունները:

2. Համայնքային ոստիկանությունն առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, «Ոստիկանության մասին», «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքներով, այլ օրենքներով, ենթաօրենսդրական ակտերով, ներքին գործերի նախարարի և ոստիկանության պետի հրամաններով, սույն կարգով և այլ իրավական ակտերով:

3. Համայնքային ոստիկանության գործունեությունը հիմնվում է օրինականության, անձի իրավունքների և ազատությունների, պատիվն ու արժանապատվությունը հարգելու, մարդասիրության և հրապարակայնության սկզբունքների վրա:

4. Համայնքային ոստիկանությունը, օրենքով իրեն վերապահված խնդիրներն իրականացնելիս, կիրառում է համագործակցության և համոզման մեթոդներ, օրենքով նախատեսված դեպքերում նաև հարկադրանքի միջոցներ, իսկ ոչ մեծ և միջին ծանրության հանցագործություններով՝ իրականացնում է օպերատիվ-հետախուզական գործունեություն:

5. Համայնքային ոստիկանությունը, իր խնդիրներն իրականացնելիս, համագործակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման, այլ իրավապահ մարմինների, ինչպես նաև կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հետ:

## 2. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

6. Համայնքային ոստիկանության գործունեության նպատակներն են՝

1) ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների և այլ իրավախախտումների նախականխումը, կանխումը, հայտնաբերումը և բացահայտումը.

2) ոչ մեծ և միջին ծանրության հանցագործություն կատարելու համար հետախուզվող անձանց հայտնաբերումը.

3) հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացումը.

4) հանցագործությունների վերլուծության հիման վրա հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքների, իրավախախտումներ ծնող պատճառների և պայմանների վերհանումը, դրանց վերացմանն ուղղված արդյունավետ միջոցառումների մշակումը և իրականացումը.

5) բնակչության շրջանում ոստիկանության նկատմամբ վստահության ամրապնդումը և փոխհամագործակցության արդյունավետության բարձրացումը.

6) բնակչության իրավագիտակցության բարձրացմանը միտված միջոցառումների իրականացումը:

## 3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԶԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

7. Համայնքային ոստիկանության գործունեության ընդհանուր ղեկավարումը և վերահսկողությունն իրականացնում է համայնքային ոստիկանության գլխավոր վարչությունը:

8. Համայնքային ոստիկանության գործունեության անմիջական ղեկավարումն իրականացնում է համայնքային ոստիկանության բաժնի պետը՝ իր տեղակալների միջոցով:

## 4. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

9. Բնակչությանը մոտ գտնվելու, իրավախախտումներին և պատահարներին արագ արձագանքելու, օպերատիվ իրավիճակը՝ վերահսկելու, ծանրաբեռնվածությունը համաչափ բաշխելու նպատակով համայնքային ոստիկանության ծառայությունը կազմակերպվում է համայնքային երկու ոստիկանի կողմից սպասարկվող՝ մինչև 7500 բնակչություն ունեցող տարածքներում: Յուրաքանչյուր տարածքի տրվում է հերթական համար և տարածքի անձնագիր:

10. Տարածքների սահմաններն ու չափերը, համայնքային ոստիկանության բաժնի պետի իրավասու տեղակալի ներկայացմամբ, որոշում, հաստատում և անհրաժեշտության դեպքում վերանայում է համայնքային ոստիկանության բաժնի պետը:

11. Վարչական շրջաններում գործող հենակետերը օգտագործվում են ծառայողական նպատակներով:

12. Համայնքային ոստիկանության բաժնի կողմից սպասարկվող վարչական տարածքը տարածքների բաժանելիս՝ հաշվի են առնվում՝

1) բնակչության թիվը և խտությունը.

2) բնակավայրերի հեռավորությունը.

3) տարածքի ռելիեֆը և բնակլիմայական պայմանները.

4) ուսումնական հաստատությունների և ժամանցի վայրերի առկայությունը.

5) տարածքի սեզոնային առանձնահատկությունները.

6) սպասարկվող տարածքի օպերատիվ իրավիճակը և այլ առանձնահատկություններ:

13. Ծառայության կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով համայնքային ոստիկանության բաժնի պետի կողմից կարող են որոշվել տարածքի այլ չափեր:

14. Մարզերում համայնքային ոստիկանության երկու ծառայողին ամրակցվում է մինչև 8 գյուղական բնակավայր, որոնց բնակչության ընդհանուր թիվը չպետք է գերազանցի 7500-ը:

15. Տարածքի հանձնման-ընդունման աշխատանքները կատարվում են համայնքային ոստիկանության բաժնի պետի, իրավասու տեղակալի և տվյալ տարածքը սպասարկող համայնքային ոստիկանի մասնակցությամբ: Տարածքի հանձնման-ընդունման մասին կազմվում է համապատասխան արձանագրություն, որում պարտադիր նշվում են արձանագրությունը կազմելու օրը, ամիսը և տարեթիվը, հանձնող և ընդունող ծառայողների անունը, ազգանունը և պաշտոնը, բաժնի պետի կամ իրավասու տեղակալի անունը, ազգանունը և պաշտոնը, տարածքին վերաբերելի փաստաթղթերի ցանկը: Արձանագրությունը ստորագրում են հանձնող և ընդունող ծառայողները, ինչպես նաև բաժնի պետը կամ իրավասու տեղակալը:

## 5. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

16. Համայնքային ոստիկանության ծառայողները պետք է իմանան՝

1) իրենց կողմից սպասարկվող տարածքի սահմանները, դրա առանձնահատկությունները, առկա տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերի տեղակայման վայրերը, ուսումնակրթական, մշակութային, առողջապահական, արտադրական կազմակերպությունների, դրամաիրային խոշոր չափի արժեքներ շրջանառող օբյեկտների (բանկեր, տարադրամի փոխանակման կետեր, գրավատներ, փոստային բաժանմունքներ և այլն), թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր կամ դրանց պրեկուրսորներ պատրաստող, վերամշակող և պահող կազմակերպությունների, ինչպես նաև թույլտվության համակարգի օբյեկտների տեղակայման վայրերը և աշխատանքային ռեժիմները.

2) բնակչության զբաղվածության բնույթը, նրա էթնիկական կազմը, տեղական սովորույթներն ու ավանդույթները.

3) տարածքում կատարված՝ հանցագործությունների վիճակագրությունը, դրանց շարժընթացը, կատարմանը նպաստող պատճառներն ու պայմանները, հետախուզվող անձանց մասին տվյալները, տուժողների ու հափշտակված իրերի, առարկաների մասին տեղեկությունները, այն անձանց (այդ թվում՝ անչափահասների) մասին տվյալները, որոնց վարքագիծը վերահսկվում է ոստիկանության և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության կողմից, և օպերատիվ հետաքրքրություն ներկայացնող այլ տեղեկություններ.

4) իրենց կողմից սպասարկվող տարածքում գործող կրոնական և հասարակական կազմակերպությունների մասին տեղեկություններ,

5) իր գործունեությանն անմիջականորեն առնչվող այլ տեղեկություններ:

17. Համայնքային ոստիկանությունն օրենսդրությամբ սահմանված դեպքերում իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների և այլ իրավախախտումների հայտնաբերում և բացահայտում, ինչպես նաև հանցագործությունների նախականխմանն, կանխմանն և բացահայտմանն ուղղված աշխատանքներ.

2) ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար հետախուզվող անձանց, ինչպես նաև անհայտ կորած անձանց հայտնաբերման աշխատանքներ.

3) ուսումնասիրում և վերլուծում է սպասարկվող տարածքում գրանցված ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների և այլ իրավախախտումների վիճակագրությունը, շարժընթացը, սոցիալ-ժողովրդագրական կառուցվածքը, հանցագործությունները ծնող պատճառներն ու պայմանները.

4) հանցագործությունների կատարմանը նպաստող հանգամանքները վերացնելու ուղղությամբ միջնորդություններ և առաջարկություններ է ներկայացնում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, պաշտոնատար անձանց, կազմակերպություններին.

5) Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի համաձայն՝ սահմանված կարգով և ժամկետներում քննարկում է ստացված միջնորդագրերը.

6) բնակիչներին իրազեկում է հանցագործություններից և այլ իրավախախտումներից պաշտպանության իրավաչափ եղանակների, մեթոդների և միջոցների մասին.

7) բնակչության հետ աշխատանքներ է տանում իրավախախտումների կանխարգելման գործընթացում նրանց ներգրավվելու ի շահ համայնքի, ըստ անհրաժեշտության կազմում բնակիչների հետ համագործակցության կարճաժամկետ և երկարաժամկետ գործողությունների ծրագրեր.

8) հաշվառում է՝

ա) քրեակատարողական հիմնարկներից, կարգապահական գումարտակից պատիժը լրիվ կրելուց ազատված անձանց,

բ) այն անձանց, ովքեր Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 85-րդ հոդվածի համաձայն պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվել են,

գ) այն անձանց, որոնց նկատմամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի համաձայն պատիժը պայմանականորեն չի կիրառվել կամ որոնց նկատմամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 86-րդ հոդվածով պատժի կատարումը հետաձգվել է,

դ) անչափահաս մեղադրյալներին, մեկ տարվա ընթացքում երկու կամ ավելի անգամ վարչական իրավախախտում կատարած անչափահասներին, բացառությամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով վարչական պատասխանատվությունից ազատելու դեպքերի, երկու կամ ավելի անգամ բնակության վայրն ինքնակամ լքած մինչև 16 տարեկան անչափահասներին, մանկավարժական խորհրդի համապատասխան որոշման հիման վրա պարտադիր ուսուցումից 120 և ավելի ժամաքանակ դասեր անհարգելի բաց թողած, թափառաշրջիկությամբ, մուրացկանությամբ, շահումով խաղերով զբաղվող, ոգելից խմիչքներ, թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), թունավոր կամ այլ թմրեցնող նյութեր օգտագործող անչափահասներին, ազատազրկման ձևով պատիժը կրած անչափահասներին, դատարանի կողմից դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառվելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատված անչափահասներին, որոնց վարքագծի նկատմամբ հետագա վերահսկողությունը դրվել է ոստիկանության վրա, անչափահասներին, որոնց նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ ռեաբիլիտացնող հանգամանքներով, անչափահասների վրա բացասական ազդեցություն ունեցող ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին,

ե) ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերն ու ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց,

զ) բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում հաշվառված՝ ալկոհոլամոլություն, թմրամոլություն, թունամոլություն կամ դեղամոլություն ունեցող անձանց, ինչպես նաև շրջապատի համար վտանգ ներկայացնող հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց,

է) պոռնկությամբ զբաղվող անձանց,

ը) կենցաղային ոլորտում պարբերաբար իրավախախտումներ թույլ տվող անձանց,

թ) մշտական բնակության վայր չունեցող թափառաշրջիկ կամ մուրացիկ անձանց,

ժ) օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված և պահվող զենքերը,

9) սույն կետի 8-րդ ենթակետում նշված անձանց հաշվառելուց հետո նրանց հետ, բացառությամբ սույն կետի 8-րդ ենթակետի «բ», «գ», «զ», «թ», «ժ» պարբերությունում նշված անձանց, իրականացնում է պրոֆիլակտիկ աշխատանքներ.

10) ձեռնարկում է միջոցներ՝ սույն կետի 8-րդ ենթակետում նշված անձանց՝ օրենսդրությամբ սահմանված ու անհրաժեշտ հետազոտություններն անցնելն ապահովելու համար.

11) պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ համապատասխան միջոցառումների կազմակերպմամբ՝ հայտնաբերում է առանց հսկողության թողնված անչափահասներին, ինչպես նաև հաշվառման մեջ գտնվող անչափահասներին՝ նրանց կողմից կամ մասնակցությամբ հանցագործությունները կանխելու և դաստիարակչական բնույթի աշխատանքներ իրականացնելու նպատակով.

12) բնակչության շրջանում իրականացնում է նրանց իրավագիտակցության բարձրացմանն միտված քարոզչական և կրթական միջոցառումներ.

13) ստուգում է զենքը պահելու և կրելու իրավունք ունեցող անձանց կողմից զենքի պահման պայմանները.

14) օրենքով սահմանված դեպքերում և կարգով հարուցում է վարչական վարույթ, կազմում է վարչական արձանագրություններ և կայացնում որոշում.

15) ստանում է հաղորդումներ սպասարկվող տարածքում կատարված հանցագործությունների մասին, սահմանված կարգով գրանցում և հաշվառում, ինչպես նաև արագ արձագանքում.

16) ապահովում է դեպքի վայրի պահպանությունը, հայտնաբերում ականատես վկաներին.

17) աջակցում է ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության ստորաբաժանումներին հավաքներից կամ զինակոչից խուսափող անձանց հայտնաբերելու և այդ անձանց նշված ստորաբաժանումներ ներկայացնելու հարցում.

18) աջակցում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայությանը՝ օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետությունից վտարելու ուղղությամբ.

19) աջակցում է հանրային ծառայողներին և այլ պաշտոնատար անձանց՝ օրենքով նախատեսված իրենց լիազորությունները կատարելիս, եթե առանձին անձինք չեն ենթարկվում նրանց օրինական պահանջներին կամ խոչընդոտում են նրանց լիազորությունների իրականացմանը.

20) մասնակցում է սպասարկվող տարածքին առնչվող հարցերի քննարկմանը, հայտնաբերված թերությունների կամ խնդիրների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնում տեղական ինքնակառավարման մարմիններին.

21) փոխհամագործակցում է համայնքի ավագանու, համայնքի ղեկավարի, սպասարկվող տարածքում գործունեություն իրականացնող հասարակական միավորումների և կազմակերպությունների հետ.

22) բնակչության հետ հանդիպումների ժամանակ քննարկում է նրանց հուզող այն հարցերը, որոնք առնչվում են համայնքային ոստիկանության գործունեության հետ.

23) ընդունում է բնակիչների կողմից ներկայացված բողոքները, օրենքով սահմանված կարգով իր իրավասության սահմաններում քննարկում և լուծում դրանք.

24) բնակիչներին իր լիազորությունների շրջանակներում տրամադրում է տեղեկություն և խորհրդատվություն.

25) համապատասխան իրավասություն ունեցող մարմինների, խնամակալության և հոգաբարձության մարմինների, ուսումնական հաստատությունների կամ անչափահասների աշխատավայրերի վարչակազմին կամ իրավասու այլ անձանց, անչափահասների ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին տեղեկացնում է անչափահասների հանցավորությանը նպաստող պայմանների և պատճառների մասին, ներկայացնում առաջարկություններ դրանց վերացման ուղղությամբ.

26) անցկացնում է անչափահասների հետ անհատական դաստիարակչական աշխատանքներ, աջակցում է տեղական ինքնակառավարման մարմիններին և պրոբացիայի ծառայությանն անչափահասների նկատմամբ կիրառված դաստիարակչական բնույթի միջոցներն արդյունավետ կազմակերպելուն.

27) հայտնաբերում է այն ծնողներին կամ օրինական այլ ներկայացուցիչներին, ովքեր դիտավորյալ անտեսում են ծնողական պարտականությունների կատարումը կամ խուսափում են դրանց կատարումից և որոնց հակահիրավական վարքագիծը հիմք է հանդիսանում կամ կարող է պատճառ հանդիսանալ անչափահասների կողմից իրավախախտում կատարելու համար, և այդպիսի անձանց նկատմամբ ձեռնարկում օրենքով սահմանված միջոցներ.

28) համագործակցում է անչափահասների հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների, ուսումնական և սոցիալական աջակցության, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կամ այլ կազմակերպությունների ու այլ շահագրգիռ մարմինների հետ՝ կազմակերպելու հակահիրավական վարք դրսևորող անչափահասների սոցիալական և իրավական վերականգնումը, դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների ենթարկված անչափահասներին իրազեկում է այդ միջոցների, այդ թվում՝ անչափահասների վերականգնողական հաստատության մասին.

29) հայտնաբերում է բռնության ենթարկված երեխաներին և ապահովում նրանց պաշտպանությունը.

30) հրդեհների, դժբախտ պատահարների, տարերային աղետների կամ այլ արտակարգ իրավիճակների ժամանակ համագործակցում է պետական և այլ մարմինների ու կազմակերպությունների հետ՝ մարդկանց կյանքը փրկելու, նրանց գույքը պաշտպանելու և առաջին օգնություն ցուցաբերելու համար անհետաձգելի միջոցառումներ ձեռնարկելու համար.

31) ըստ անհրաժեշտության կարող է մասնակցել սպասարկվող տարածքում արտակարգ իրավիճակի կամ ռազմական դրության իրավական ռեժիմի ապահովմանը, ինչպես նաև համաճարակների ժամանակ կարանտին միջոցառումների անցկացմանը.

32) բնակիչների դիմումների հիման վրա տրամադրում է դատվածության մասին տեղեկանքներ.

33) անշարժ գույքի օրինական տիրապետողի լիազորմամբ կանխում կամ վերացնում է առանց օրենքով սահմանված հիմքերի կամ օրինական տիրապետողի թույլտվության անշարժ գույքի տարածք մուտք գործելը (ներխուժումը).

34) իրականացնում է «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքով նախատեսված լիազորությունները:

## 6. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ՆԱԽԱԿԱՆԽԵԼԻՍ

18. Համայնքային ոստիկանության ծառայողները, հանցագործությունների և այլ իրավախախտումների պրոֆիլակտիկա իրականացնելիս, տեղամասի անձնագրում հաշվառում և անհատական պրոֆիլակտիկ (կանխարգելիչ) միջոցառումներ իրականացնում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունիսի 1-ի N 893-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հոկտեմբերի 24-ի N 1703-Ն որոշումներով սահմանված կարգերով:

## 7. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ

19. Համայնքային ոստիկանությունը, իր խնդիրներն իրականացնելիս, համագործակցում է համայնքի բնակչության, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, այլ իրավապահ մարմինների, իրավապաշտպան և սոցիալական ուղղվածություն ունեցող կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, կրոնական կազմակերպությունների, զանգվածային լրատվամիջոցների և այլ միավորումների հետ:

20. Համայնքային ոստիկանության ծառայողը, համայնքի ղեկավարի կամ ավագանու հրավերով կարող է մասնակցել համայնքի ավագանու նիստերին:

21. Համայնքային ոստիկանության ծառայողը համայնքի բնակիչների հետ համագործակցությունն ամրապնդելու նպատակով՝ էլեկտրոնային հարթակների միջոցով կազմակերպում է հանրային քննարկումներ և հանդիպումներ՝ համայնքում առկա խնդիրների լուծման կամ համայնքի բնակիչներին այլ պետական մարմիններ ուղղորդման նպատակով:

## 8. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

22. Համայնքային ոստիկանության գործունեությունը հրապարակային է:

23. Համայնքային ոստիկանությունը ոստիկանության ինտերնետային պաշտոնական կայքէջի կառուցվածքում ունի իր ենթաէջը, որում հրապարակվում են համայնքային ոստիկանության կատարած ու ընթացիկ աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ և այլ տեղեկություններ:

24. Համայնքային ոստիկանության կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները տրամադրվում են ֆիզիկական անձանց և կազմակերպություններին՝ նրանց հարցումների հիման վրա:

25. Տրամադրված տեղեկատվություններն ենթակա են հրապարակման և պարտադիր հաշվի են առնվում համայնքային ոստիկանության աշխատանքների կազմակերպման ու գործունեության վերաբերյալ որոշումներ ընդունելիս:

26. Համայնքային ոստիկանության գործունեությունը ոստիկանության կողմից գնահատվում է համայնքում կատարված հարցումների (սոցիոլոգիական, ինտերնետային, ռադիոհեռուստատեսային և այլն) արդյունքների հիման վրա և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ ընթացակարգերով:

27. Համայնքային ոստիկանության ծառայողի գործունեության գնահատման չափորոշիչներն են՝

1) հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման վիճակը.

2) հանցագործությունների և վարչական իրավախախտումների նախականխման, կանխման, խափանման և բացահայտման աշխատանքները.

3) ֆիզիկական անձանց դիմումների և բողոքների սահմանված ժամկետում և կարգով քննարկումը.

4) ստացված հաղորդումների օպերատիվ արձագանքումը և հացագործությունները «տաք հետքերով» բացահայտումը,

4) ծառայողական կարգապահությունը և օրինականության ապահովումը.

5) համայնքի բնակիչներին հասարակական կարգի ապահովման գործում նեգրավման մաշտաբայնությունը.

6) մարդու իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումը.

7) ծառայողական գործունեության ընթացքում ինքնուրույն՝ հիմնավոր և պատճառաբանված որոշումների կայացումը, խնդիրներին լուծում տալու կարողությունը:

**Հավելված N 2**
**Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2024 թվականի**
**նոյեմբերի 01-ի N 77-Լ հրամանի**

## ԿԱՐԳ

## Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության փաստաթղթերի ձևերը սահմանելու և դրանց վարման

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության /այսուհետ՝ համայնքային ոստիկանություն/ ծառայողների կողմից վարվող՝ միասնական հաշվառման մատյանի, տեղամասի անձնագրի, պրոֆիլակտիկ գործի, հաշվառված անձանց հաշվետվության վարման գործընթացը և դրանց ձևերը:

2. Միասնական հաշվառման մատյանը (Ձև 1) գրանցվում է ոստիկանության բաժնի փաստաթղթաշրջանառություն իրականացնող աշխատակցի կողմից, էջերը համարակալվում, կարվում և կնքվում են: Միասնական հաշվառման մատյանը վարվում է համայնքային ոստիկանության բաժնի պետի տեղակալի կողմից և մշտապես պահվում է նրա մոտ՝ չհրկիզվող կամ մետաղյա պահարանում: Միասնական հաշվառման մատյանի առանձին բաժիններում հաշվառման մեջ գտնվող անձանց գրանցման հերթական համարները յուրաքանչյուր տարի սկսվում են «01» թվից, այնուհետև դրվում է գծիկ և նշվում հաշվառման տարեթվի վերջին երկու նիշերը:

3. Տեղամասի անձնագրում (ձև 2) լրացվում են տեղեկություններ տեղամասի սոցիալ-տնտեսական, դեմոգրաֆիկ և այլ առանձնահատկությունների, պահպանության վերցված բնակարանների, առանձնատների, տնտեսվարող սուբյեկտներին պատկանող, կարևորագույն նշանակության, ինչպես նաև մասնավոր պահնորդական կազմակերպությունների ուժերով պահպանվող օբյեկտների, դրանց պահպանությանը ներգրավված վերակարգերի և այլ ուժերի, թույլտվության համակարգի և զենք ունեցող անձանց, տարածքում հասարակական կարգի ապահովմանը, տեղամասում կատարված՝ չբացահայտված հանցագործությունների և հետախուզվողների վերաբերյալ: Տեղամասի անձնագիրը գրանցվում է ոստիկանության տարածքային բաժնի փաստաթղթաշրջանառություն իրականացնող աշխատակցի կողմից հերթական համարի տակ և համայնքային ոստիկանին տրվում է ստորագրությամբ: Այն պահվում է համայնքային ոստիկանի ծառայողական սենյակում, չհրկիզվող կամ մետաղյա պահարանում և օգտագործվում է ամենօրյա աշխատանքի ընթացքում: Տեղամասի անձնագրում գրառումները կատարվում են գրիչով և դյուրընթեռնելի: Տեղամասի սահմանների էական փոփոխությունների դեպքում լրացվում է նոր անձնագիր, որի մեջ ներառվում են նոր ստեղծված տեղամասի հետ առնչվող տեղեկությունները, իսկ նախկինում կազմված անձնագիրը հանձնվում է ոստիկանության տարածքային մարմնի փաստաթղթաշրջանառություն իրականացնող աշխատակցին և ոչնչացվում սահմանված կարգով: Անձնագրի վարման կարգը ոստիկանության բաժնի պետի կողմից ստուգվում է յուրաքանչյուր կիսամյակ, իսկ բաժնի պետի տեղակալի կողմից՝ առնվազն եռամսյակը մեկ անգամ:

4. Համայնքային ոստիկանությունում հաշվառված անձանց քանակական տվյալների եռամսյա ամփոփումն իրականացվում է «Հաշվառված անձանց հաշվետվություն» /այսուհետ՝ Հաշվետվություն/ ձևի հաշվետվությամբ (Ձև 3): Հաշվետվությունը կազմվում է եռամսյակի, կիսամյակի, ինն ամսվա և տարվա արդյունքներով: Հաշվետվությունը ստուգվում է համայնքային ոստիկանության բաժնի պետի տեղակալի կողմից և հաստատվում բաժնի պետի ստորագրությամբ: Հաշվետվությունը կազմվում է 2 օրինակից, որոնցից 1-ը մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 5-ը ներկայացվում է համայնքային ոստիկանության գլխավոր վարչություն:

5. Հաշվառված անձանց վերաբերյալ պրոֆիլակտիկ գործերի (Ձև 4) կազմումը և վարումն իրականցվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հոկտեմբերի 24-ի N 1703-Ն որոշմամբ սահմանված կարգով:

Ձև 1

# Մ Ա Տ Յ Ա Ն N_____

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ _____ ԲԱԺՆԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ

Սկսվել է «  » _____ 20  թ.

Ավարտվել է «  » _____ 20  թ.

1. Ազատազրկման վայրերից պատիժը լրիվ կրելուց հետո ազատված անձանց ցուցակ

| N | ԱԱՀ, ծննդյան վայրը և ամսաթիվը | Բն. վայրի հասցեն, հեռ. համարը, հաշվառման վերցնելու ամսաթիվը | Աշխատանքի վայրը, պաշտոնը, հեռ. համարը | ՔԿՀ-ից ազատման ամսաթիվը, քանի անգամ է դատապարտվել և ինչ հոդվածներով | Երբ է հանվել հաշվառումից, հիմքը | Դատվածության մարման ամսաթիվը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | | | | | | |

## 2. Պրոբացիայի ծառայությունում հաշվառման մեջ գտնվող անձանց ցուցակ

| N | ԱԱՀ, ծննդյան վայրը և ամսաթիվը | Բնակության վայրի հասցեն, հեռ. համարը | Աշխատանքի վայրը, պաշտոնը, հեռ. համարը | Երբ և ինչի համար է դատապարտվել | Երբ է վերցվել հաշվառման, հիմքը, | Դատարանի կողմից ինչպիսի պարտականություններ են դրվել | Երբ է հանվել հաշվառումից, հիմքը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | | | | | | | |

3.Կենցաղային ոլորտում պարբերաբար իրավախախտումներ կատարող անձանց ցուցակ

| N | ԱԱՀ, ծննդյան վայրը և ամսաթիվը | Բնակության վայրի հասցեն, հեռ. համարը | Աշխատանքի վայրը, պաշտոնը, հեռ. համարը | Երբ և ում նկատմամբ է թույլ տվել կենցաղային ոլորտի իրավախախտումներ | Հաշվառման վերցնելու ամսաթիվը | Երբ է հանվել հաշվառումից, հիմքը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | | | | | | |

4. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում հաշվառված ալկոհոլամոլություն ախտորոշում ունեցող անձանց ցուցակ

| N | Անունը, հայրանունը, ազգանունը Հաշվառման վերցնելու ամսաթիվը | Ծննդյան վայրը և ամսաթիվը | Բնակության վայրի հասցեն, հեռ. համարը | ախտորոշումը | Երբվանից է գտնվում հաշվառման մեջ բուժ. հիմն. հեռ. համարը | Երբ է հանվել ոստ. ստորաբաժանման հաշվառումից, հիմքը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | | | | | | |

5. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում հաշվառված թմրամոլություն ախտորոշում ունեցող անձանց ցուցակ

| N | Անունը, հայրանունը, ազգանունը Հաշվառման վերցնելու ամսաթիվը | Ծննդյան վայրը և ամսաթիվը | Բնակության վայրի հասցեն, հեռ. համարը | ախտորոշումը | Երբվանից է գտնվում հաշվառման մեջ բուժ. հիմն. հեռ. համարը | Երբ է հանվել ոստ. ստորաբաժանման հաշվառումից, հիմքը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | | | | | | |

6. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում հաշվառված դեղամոլություն ախտորոշում ունեցող անձանց ցուցակ

| N | Անունը, հայրանունը, ազգանունը Հաշվառման վերցնելու ամսաթիվը | Ծննդյան վայրը և ամսաթիվը | Բնակության վայրի հասցեն, հեռ. համարը | ախտորոշումը | Երբվանից է գտնվում հաշվառման մեջ բուժ. հիմն. հեռ. համարը | Երբ է հանվել ոստ. ստորաբաժանման հաշվառումից, հիմքը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | | | | | | |

7. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում հաշվառված հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ցուցակ

| N | Անունը, հայրանունը, ազգանունը Հաշվառման վերցնելու ամսաթիվը | Ծննդյան վայրը և ամսաթիվը | Բնակության վայրի հասցեն, հեռ. համարը | ախտորոշումը | Երբվանից է գտնվում հաշվառման մեջ բուժ. հիմն. հեռ. համարը | Երբ է հանվել ոստ. ստորաբաժանման հաշվառումից, հիմքը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | | | | | | |

## 8. Պոռնկությամբ զբաղվող անձանց ցուցակ

| N | ԱԱՀ. | Ծննդյան վայրը և ամսաթիվը | Բնակության վայրի հասցեն, հեռ. համարը | Երբ է վերցվել հաշվառման, հիմքը | բուժ. հաստ. հաշվառման մեջ գտնվելու դեպքում ախտորոշումը, հեռ. համարը | Երբ է հանվել հաշվառումից, հիմքը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | | | | | | |

## 9. Թափառաշրջիկությամբ և մուրացկանությամբ զբաղվող անձանց ցուցակ

| N | ԱԱՀ | Ծննդյան վայրը և ամսաթիվը | Բնակության կամ հաշվառման հասցեն, հեռ. համարը | Երբվանից է գտնվում հաշվառման մեջ | Ձեռնարկված միջոցները | Երբ է հանվել հաշվառումից, հիմքը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | | | | | | |

# Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

Ն_____ տեղամասի

_____

ոստիկանության ստորաբաժանման անվանումը

_____

անձնագիրը վարող համայնքային ոստիկանի ԱԱՀ

Սկսվել է «  » _____ 20  թ.

Ավարտվել է «  » _____ 20  թ.

# ՏԵՂԱՄԱՍԻ ԱՆՁՆԱԳՐԻ ՎԱՐՄԱՆ ԵՎ ՊԱՀՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Տեղամասի անձնագրում լրացվում են հետևյալ տեղեկությունները՝ տեղամասի սոցիալ-տնտեսական, դեմոգրաֆիկ և այլ առանձնահատկությունների, թույլտվության համակարգի և պահպանության ենթակա օբյեկտների, զենք ունեցող անձանց, տարածքում հասարակական կարգի ապահովմանը և օբյեկտների պահպանությանը ներգրավված վերակարգերի և այլ ուժերի, տեղամասում կատարված՝ չբացահայտված հանցագործությունների, հետախուզվողների վերաբերյալ:

Տեղամասի անձնագիրը գրանցվում է ոստիկանության տարածքային բաժնի փաստաթղթաշրջանառություն իրականացնող աշխատակցի կողմից հերթական համարի տակ և համայնքային ոստիկանին տրվում է ստորագրությամբ: Այն պահվում է համայնքային ոստիկանի ծառայողական սենյակում, չիրկիզվող կամ մետաղյա պահարանում և օգտագործվում է ամենօրյա աշխատանքի ընթացքում: Տեղամասի անձնագրում գրառումները կատարվում են գրիչով և դյուրընթեռնելի:

Տեղամասի սահմանների էական փոփոխությունների դեպքում լրացվում է նոր անձնագիր, որի մեջ ներառվում են նոր ստեղծված տեղամասի հետ առնչվող տեղեկությունները, իսկ նախկինում կազմված անձնագիրը հանձնվում է ոստիկանության տարածքային մարմնի փաստաթղթաշրջանառություն իրականացնող աշխատակցին և ոչնչացվում սահմանված կարգով:

Տեղամասի անձնագրի վարման կարգը ոստիկանության բաժնի պետի կողմից ստուգվում է յուրաքանչյուր կիսամյակ, իսկ բաժնի պետի տեղակալի կողմից՝ առնվազն եռամսյակը մեկ անգամ:

## 1. Տեղեկություններ անձնագրի շարժի մասին

| N | Համայնքային ոստիկանի ԱԱՀ կոչումը | Անձնագիրն ընդունելու ամսաթիվը | փաստաթղթաշրջանառություն իրականացնող աշխատակցին հանձնելու ամսաթիվը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| | | | |

# ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

## 2. Տեղամասը բնութագրող տեղեկություններ

| Տեղամասը բնութագրող հիմնական տվյալները | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 20 թ. | 20 թ. | 20 թ. | 20 թ. | 20 թ. |
| Տարածքը (կմ$^2$) | | | | | | |
| Բնակելի շինություններ | | | | | | |
| Բնակավայրեր (գյուղեր) | | | | | | |
| Այդ թվում | բազմաբնակարան շենքեր | | | | | |
| | անհատական տներ | | | | | |
| | հանրակացարաններ | | | | | |
| Բնակիչների թիվը | | | | | | |
| Հաշվառված անձանց թիվը | | | | | | |
| Արդյունաբերական կազմակերպություններ | | | | | | |
| Ֆերմերային տնտեսություններ | | | | | | |
| Առևտրի և սննդի օբյեկտներ | | | | | | |
| Պահեստներ | | | | | | |
| Բանկեր, տարադրամի փոխանակման կետեր | | | | | | |
| Փոստային բաժանմունքներ | | | | | | |
| Հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ, կլինիկաներ, դեղատներ | | | | | | |
| Ուսումնական հաստատություններ | | | | | | |
| Ավտոկայանատեղեր, ավտո-վերանորոգման կետեր | | | | | | |
| Մշակութային կենտրոններ | | | | | | |
| Թույլտվության համակարգի օբյեկտներ | | | | | | |

3. Դեսպանատներ, հյուպատոսարաններ, բնակավայրեր, կազմակերպություններ, առողջապահական, մշակութային և ուսումնակրթական հաստատություններ, համատիրություններ, հանրակացարաններ

| N | Անվանումը | Հասցեն | Ղեկավարի Ա.Ա, հեռախոսի համարը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| | | | | |

4. Պահպանվող հատուկ, կարևորագույն և այլ օբյեկտներ, բնակարաններ, դրամահրային խոշոր չափի արժեքներ շրջանառող օբյեկտներ
(բանկեր, տարադրամի փոխանակման կետեր, գրավատներ, փոստային բաժանմունքներ և այլն )

| N | Անվանումը | Հասցեն | Ղեկավարի Ա.Ա, հեռախոսի համարը | Աշխատանքային ռեժիմը | Պահպանության ձևը, պահպ. ղեկավարի Ա.Ա, հեռ. համարը | Ծանո-թություն |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | | | | | | |

5. Թույլտվության համակարգի օբյեկտներ (զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր, թմրամիջոցներ, հոգեմետ նյութեր կամ դրանց պրեկուրսորներ պատրաստող, վերամշակող և պահող կազմակերպություններ)

| N | Անվանումը | Հասցեն | Ղեկավարի Ա.Ա, հեռախոսի համարը | Հսկվող առարկաների և նյութերի անվ. պահպանության ձևը | Թույլտվության համարը, երբ, ում կողմից է տրվել, ինչ ժամկետով |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | | | | | |

## 6. Զենք ունեցող անձանց ցուցակը

| N | Զենքը տիրապետողի Ա.Ազգանունը, հասցեն, հեռ. համարը | Զենքի տեսակը, մոդելը, համարը | Թույլտվութ. համարը, երբ, ում կողմից է տրվել | Թույլտվութ. գործողության ժամկետը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | | | | | |

## 7. Տեղեկություններ տեղամասի տարածքում հասարակական կարգի ապահովմանը և օբյեկտների պահպանությանը ընդգրկված կարգախմբերի վերաբերյալ

| N | Պահակետի, երթուղու համարը | Վերակարգի տեսակը և ծառայության կատարման վայրի նկարագիրը | Ծառայություն կատարելու սկիզբը և ավարտը, կապի միջոցները | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| | | | | |

# ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

Տեղեկություններ հաշվառման մեջ գտնվող այն անձանց վերաբերյալ, որոնց նկատմամբ իրականացվում են պրոֆիլակտիկ միջոցառումներ

## 8. Ազատազրկման վայրերից պատիժը լրիվ կրելուց հետո ազատված անձանց ցուցակ

| N | ԱԱՀ, ծննդյան վայրը և ամսաթիվը | Բն. վայրի հասցեն, հեռ. համարը, հաշվառման վերցնելու ամսաթիվը | Աշխատանքի վայրը, պաշտոնը, հեռ. համարը | ՔԿՀ-ից ազատման ամսաթիվը, քանի անգամ է դատապարտվել և ինչ հոդվածներով | Երբ է հանվել հաշվառումից, հիմքը | Դատվածության մարման ամսաթիվը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | | | | | | |

## 9. Պրոբացիայի ծառայությունում հաշվառման մեջ գտնվող անձանց ցուցակ

| N | ԱԱՀ, ծննդյան վայրը և ամսաթիվը | Բնակության վայրի հասցեն, հեռ. համարը | Աշխատանքի վայրը, պաշտոնը, հեռ. համարը | Երբ և ինչի համար է դատապարտվել | Երբ է վերցվել հաշվառման, հիմքը, | Դատարանի կողմից ինչպիսի պարտականություններ են դրվել | Երբ է հանվել հաշվառումից, հիմքը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | | | | | | | |

10.Կենցաղային ոլորտում պարբերաբար իրավախախտումներ կատարող անձանց ցուցակ

| N | ԱԱՀ, ծննդյան վայրը և ամսաթիվը | Բնակության վայրի հասցեն, հեռ. համարը | Աշխատանքի վայրը, պաշտոնը, հեռ. համարը | Երբ և ում նկատմամբ է թույլ տվել կենցաղային ոլորտի իրավախախտումներ | Հաշվառման վերցնելու ամսաթիվը | Երբ է հանվել հաշվառումից, հիմքը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | | | | | | |

11. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում հաշվառված ալկոհոլամոլություն ախտորոշում ունեցող անձանց ցուցակ

| N | Անունը, հայրանունը, ազգանունը Հաշվառման վերցնելու ամսաթիվը | Ծննդյան վայրը և ամսաթիվը | Բնակության վայրի հասցեն, հեռ. համարը | ախտորոշումը | Երբվանից է գտնվում հաշվառման մեջ բուժ. հիմն. հեռ. համարը | Երբ է հանվել ոստ. ստորաբաժանման հաշվառումից, հիմքը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | | | | | | |

12. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում հաշվառված թմրամոլություն ախտորոշում ունեցող անձանց ցուցակ

| N | Անունը, հայրանունը, ազգանունը Հաշվառման վերցնելու ամսաթիվը | Ծննդյան վայրը և ամսաթիվը | Բնակության վայրի հասցեն, հեռ. համարը | ախտորոշումը | Երբվանից է գտնվում հաշվառման մեջ բուժ. հիմն. հեռ. համարը | Երբ է հանվել ոստ. ստորաբաժանման հաշվառումից, հիմքը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | | | | | | |

13. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում հաշվառված դեղամոլություն ախտորոշում ունեցող անձանց ցուցակ

| N | Անունը, հայրանունը, ազգանունը Հաշվառման վերցնելու ամսաթիվը | Ծննդյան վայրը և ամսաթիվը | Բնակության վայրի հասցեն, հեռ. համարը | ախտորոշումը | Երբվանից է գտնվում հաշվառման մեջ բուժ. հիմն. հեռ. համարը | Երբ է հանվել ոստ. ստորաբաժանման հաշվառումից, հիմքը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | | | | | | |

14. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում հաշվառված հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ցուցակ

| N | Անունը, հայրանունը, ազգանունը Հաշվառման վերցնելու ամսաթիվը | Ծննդյան վայրը և ամսաթիվը | Բնակության վայրի հասցեն, հեռ. համարը | ախտորոշումը | Երբվանից է գտնվում հաշվառման մեջ բուժ. հիմն. հեռ. համարը | Երբ է հանվել ոստ. ստորաբաժանման հաշվառումից, հիմքը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | | | | | | |

## 15. Պոռնկությամբ զբաղվող անձանց ցուցակ

| N | ԱԱՀ. | Ծննդյան վայրը և ամսաթիվը | Բնակության վայրի հասցեն, հեռ. համարը | Երբ է վերցվել հաշվառման, հիմքը | բուժ. հաստ. հաշվառման մեջ գտնվելու դեպքում ախտորոշումը, հեռ. համարը | Երբ է հանվել հաշվառումից, հիմքը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | | | | | | |

## 16. Թափառաշրջիկությամբ և մուրացկանությամբ զբաղվող անձանց ցուցակ

| N | ԱԱՀ | Ծննդյան վայրը և ամսաթիվը | Բնակության կամ հաշվառման հասցեն, հեռ. համարը | Երբվանից է գտնվում հաշվառման մեջ | Ձեռնարկված միջոցները | Երբ է հանվել հաշվառումից, հիմքը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | | | | | | |

## 17. Հետախուզման մեջ գտնվող անձանց ցուցակ

| N | ԱՀԱ, ծննդյան վայրը և ամսաթիվը | Բնակության վայրի հասցեն | Այն անձանց Ա.Ա և հասցեները, որտեղ կարող է գտնվել հետախուզվողը | Հատախուզումը նախաձեռնող ոստ. ստորաբա-ժանումը | Հետախուզումը հայտարարելու ամսաթիվը, հիմքը | Ձեռնարկված որոնողական աշխատանքները | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | | | | | | |

## 18. Նշումներ անձնագիրը ստուգելու մասին

Տեղամասի անձնագիրը ստուգեց _____

ստուգողի պաշտոնը,

_____

կոչումը, Ա.Ա.Հ

_____

ստուգման արդյունքները

_____

_____

_____

_____

_____

«  » _____20 թ.

_____

ստորագրությունը

Տեղամասի անձնագիրը ստուգեց _____

ստուգողի պաշտոնը,

_____

կոչումը, Ա.Ազգանունը

_____

ստուգման արդյունքները

_____

_____

_____

_____

_____

«  » _____20 թ.

_____

ստորագրությունը

Ձև 3

ՀՀ ՆԳՆ ոստիկանության _____
ում է ներկայացվում
_____ պետ

_____
կոչումը, Ա.Ազգանուն

# ՀԱՇՎԱՌՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ ՆԳՆ ոստիկանության**_____
( տարածքային բաժնիանվանումը)

**20 թ-ի** _____**ընթացքում**
(նշել հաշվետու ժամանակաշրջանը՝ եռամսյակ, կիսամսյակ, 9 ամիս, տարի)

| | | | Հաշվառման մեջ են գտնվում հաշվետու ժամանակաշրջանի սկզբում | Հաշվետու ժամանակաշրջում | | | | | Հաշվառման մեջ են գտնվում հաշվետու ժամանակաշրջանի վերջում |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | հաշվառման են վերցվել | հաշվառումից հանվել են | այդ թվում | | | |
| | | | | | | ժամկետը լրանալու պատճառով | դատարանի վճռի պատճառով | այլ հիմքերով | |
| | | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| Ազատազրկման վայրերից ազատվածներ | | 1 | | | | | | | |
| Կենցաղային ոլորտում պարբերաբար իրավախախտումներ թույլ տվածներ | | 2 | | | | | | | |
| Պրոբացիայի ծառայությունում հաշվառման մեջ գտնվողներ | | 3 | | | | | | | |
| Բժշ. օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում հաշվառվածներ | | 4 | | | | | | | |
| որոնցից | Ալկոհոլամոլության ախտ. ունեցող | 5 | | | | | | | |
| | Թմրամոլության ախտ. ունեցող | 6 | | | | | | | |
| | Դեղամոլության ախտ. ունեցող | 7 | | | | | | | |
| | հոգեկան առողջության խնդիրներ ունեցող | 8 | | | | | | | |
| Պոռնկությամբ զբաղվողներ | | 9 | | | | | | | |
| Թափառաշրջիկներ | | 10 | | | | | | | |
| Մուրացկաններ | | 11 | | | | | | | |
| **Ընդամենը (1-4 և 9-11 տողերից)** | | 12 | | | | | | | |

# ՊՐՈՖԻԼԱԿՏԻԿ ԳՈՐԾ Ն___

**Քաղ.** _____**վերաբերյալ,**
Ա. Հ. Ա.

**պրոֆիլակտիկ հաշվառման է վերցվել, որպես**

_____

Կազմվել է « » _____ 20 թ.

Ավարտվել է « » _____ 20 թ.

# Պրոֆիլակտիկ հաշվառման վերցված անձի տվյալները

| |
|---|
| լուսանկարը |

1. _____
Անունը Հայրանունը Ազգանունը

2. _____
ծննդյան օրը, ամիսը, տարին, վայրը, ազգությունը

3. _____
հաշվառման վայրի հասցեն

4. _____
փաստացի բնակության վայրի հասցեն

5. _____
զբաղվածությունը, հեռախոսի համարը

6. _____
անձնագրի սերիան, համարը երբ և ում կողմից է տրվել

7. _____
հաշվառման վերցնելու հիմքը և ամսաթիվը

_____

_____
ազատազրկման վայրից վերադարձած, պոռնկությամբ զբաղվող, կենցաղային ոլորտում պարբերաբար իրավախախտում թույլ տված

8. _____
տեղեկություններ ընտանեկան վիճակի և ընտանիքի անդամների մասին

_____

_____

9. _____
հետաքրքրություն ներկայացնող այլ տվյալներ

_____

_____

Պրոֆիլակտիկ
գործը կազմեց _____
պաշտոնը, կոչումը,

_____ _____
ստորագրությունը անուն, ազգանուն

## ՊՐՈՖԻԼԱԿՏԻԿ ԳՈՐԾՈՒՄ ԿՈՒՏԱԿՎՈՒՄ ԵՆ՝

1. Լուսանկար,
2. Քրեակատարողական հիմնարկից տրված ազատական տեղեկանքի պատճենը,
3. Անձի վարքագծի, ապրելակերպի, հարազատական, ընկերական և հանցավոր կապերի, մտադրությունների մասին տեղեկություններ,
4. Կատարած իրավախախտումների, ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ և օպերատիվ հետաքրքրություն ներկայացնող ոչ գաղտնի այլ տեղեկություններ,

5. Հսկողության արդյունքների, անձի վարքագծի և ապրելակերպի վերաբերյալ ամսական տեղեկանքներ